ՄԱՐՏԻ 8 - Ը ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆՆ Է

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՇԱԲԱԹԸ

Մարտի 2-16-ին Վրաստանում արդեն ութերորդ անգամ անցկացվում է գենդերային իրավահավասարության շաբաթը: Միջոցառումը նախաձեռնել է Վրաստանում ՄԱԿ-ի ներկայացուցչությունը, երկրի կառավարության, խորհրդարանի, քաղաքացիական հասարակությանն ու գործարարության շրջանների համագործակցությամբ: Այս տարի գենդերային իրավահավասարության շաբաթը անցկացվում է ՄԱԿ-ի կողմից հռչակված «Ուժեղ կին՝ ուժեղ հասարակություն» (Empowering Women - Empowering Humanity+ միջազգային քարոզարշավի շրջանակներում:

Գենդերային իրավահավասարության շաբաթվա շրջանակներում նախատեսված են մի շարք միջոցառումներ, մասնավորապես, կինոնկարի ցուցադրում, երիտասարդական խորհրդաժողով եւ այլն: Գենդերային իրավահավասարության շաբաթը մեկնարկեց մարտի 2-ին, Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում անցկացված 2014-2016 թվականների գործողության ծրագրի տարեկան հաշվետվության շնորհանդեսով: Շաբաթվա մեկնարկին Վրաստանում ՄԱԿ-ի ներկայացուցչությունը տարածեց հայտարարություն, որով բոլորին կոչ էր արվում մասնակցել շաբաթվա շրջանակներում իրականացվո- միջոցառումներին: Գենդերային իրավահավասարության շաբաթվա կազմակերպիչներն են Վրաստանում ՄԱԿ-ի ներկայացուցչությունն ու ՄԱԿ-ի՝ զարգացման ծրագրի գործակալությունը, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը, ՄԱԿ-ի կանանց հիմնադրամը: Շաբաթվա շրջանակներում միջոցառումները կանցկացվեն ինչպես Թբիլիսիում, այնպես էլ տարածաշրջաններում:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՄԱՐՏԻ 8-Ը, ՍԻՐԵԼԻ' ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Գարունն անբացատրելի խորհուրդ ունի. անկախ եղանակից՝ բերում է ուրախ տրամադրություն, ստեղծագործելու մեծ ցանկություն, ջերմանում է ոչ միայն բնությունը, ջերմանում են բոլորիս հոգիները, դառնում ենք ավելի բարի: Ահա ինչու՝ Մարտի 8-ը՝ Կանանց միջազգային տոնը, հիանալի առիթ է, մեր սիրելի «Վրաստան» թերթի միջոցով, ջերմությամբ ու սիրով շնորհավորելու Վրաստանում բնակվող բոլոր, եւ, իհարկե, վիրահայ կանանց, սկսած մեր Ախալքալաքիի շրջանի դպրոցների ուսուցչուհիներից՝ վերջացրած երկրի բոլոր ուսուցչուհիներին:

Մարդկությունը մշտապես մեծարել ու անչափ սիրել է կնոջը: Մեր կանայք մեծ պատվով շարունակում են կրթել, դաստիարակել, ստեղծագործել, արարել...

Երջանկություն բոլորիդ, իրականացում՝ ընտանիքի հանդեպ ունեցած ձեր բարի, համբերատար, հավատարիմ նպատակներին ու իղձերին:

ՆԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ախալքալաքիի ռեսուրս-կենտրոնի պետ

ԼՈՒԻԶԱ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԱ. «ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԻՄ ՇՐՋԱՆԸ ԿԱՊՈՒՄ ԵՄ ԹԱՏՐՈՆԻ ՆՈՐ ՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՕՐՎԱ ՀԵՏ»

Առավել հարմար առիթ, քան Մարտի 8-ը՝ Կանանց միջազգային տոնը, խոսել Թբիլիսիի պետհայդրամայի կին տնօրենի մասին ու նրա հետ, հավանաբար հնարավոր չէր պատկերացնել: Հենց միայն այն, որ Լուիզա Խաչատուրովան թատրոն էր եկել դեռեւս 18 տարեկանում, աշխատել այստեղ 25 տարի ու այժմ դարձել մեր թատրոնի առաջին կին տնօրենը, արդեն իսկ հետաքրքիր էր դարձնում նրա ասելիքը:

- Շնորհավոր բոլոր կանանց Մարտի 8-ը, Լուիզա: Կանացի, հմայիչ մնանք: Որքա՞ն ժամանակ է թատրոնի տնօրենն եք:

- Շնորհակալ եմ: Ինչ վերաբերում է տնօրենի իմ աշխատանքին, ապա նշանակվել եմ 2013թ. նոյեմբերին, Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության այն ժամանակվա նախարար Գ.Օդիշարիայի հրամանով: Իհարկե, մինչ այդ թատրոնի աշխատակազմը ժողով էր գումարել, ուր մեծամասնությունն առաջադրել էր իմ թեկնածությունը:

- Որքան հաճելի էր երեւի այդ վստահությունը...

- Ինչ խոսք, քանի որ ավագ սերնդի կողմից դա նաեւ յուրահատուկ ծնողական օրհնություն էր: Ես թատրոն եմ եկել դեռեւս 1990-ին եւ հենց ծննդյանս օրը՝ սեպտեմբերի 15-ին, երբ լրացել էր 18 տարիս, հաստատվել ռեկվիզիտի (բեմական զգեստակահավորանքի) բաժնի աշխատողի պաշտոնում, ապա նշանակվել դերասանական կազմի ղեկավար, իսկ այժմ՝ տնօրեն:

- Այն էլ դժվար մի շրջանում, երբ փաստորեն թատրոնը, իր իսկ շենքում գործելու հնարավորություն չունի:

- Օր-օրի սպասում ենք շինարարներին: Սա երեւի ամենաուրախ լուրն է լինելու թե' մեր, թե' հանդիսատեսի համար: Հետեւաբար, թատրոնում իմ տնօրինության շրջանը փորձում եմ կապել նրա նոր ու բարգավաճ օրվա հետ: Կարեւորն այն է, որ մենք դերասանների արհեստավարժ ու երիտասարդ կազմ ունենք, անընդհատ թարմացվող հետաքրքիր խաղացանկ, հյուրախաղային ու փառատոնային հարուստ ծրագրեր:

- Ո՞ր ճանապարհը բերեց թատրոնի աշխարհ:

- Մեր թատրոնի հենց մոտակայքում եմ ծնվել, բայց ասել, որ արվեստի եւ հատկապես թատրոնի ճյուղն իբրեւ մասնագիտություն ընտանիքիս ժառանգությունն է, չեմ կարող: Ծնողներս աշխատում էին Թբիլիսիի «Դինամո-Արենա» մարզադաշտում: Հայրս մարզադաշտի գլխավոր տեխնիկն էր, պատասխանատու էր ամբողջ համալիրի տեխնիկական սարքավորումների համար, իսկ մայրս լողի մարզիչ էր: Այլ ուղղություն էին ընտրել քույրերս եւս. նրանցից մեկն այսօր Թբիլիսիի շինարարական կազմակերպություններից մեկի գլխավոր ինժեներն է, մյուսը՝ Մոսկվայում աշխատում է որպես սրտաբան:

Իսկ ես սովորում էի Թբիլիսիի պետհամալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում, երբ իմացա, որ թատրոնի ռեկվիզիտի բաժնում թափուր տեղ է հայտարարվել: Անմիջապես եկա: Զուգահեռում էի ուսումն աշխատանքի հետ. մեկ մի դասախոսություն, մեկ աշխատանքային մի օր էի բաց թողնում, բայց հասցնում էի:

- Որո՞նք են թատրոնի մոտ ծրագրերը:

- Այս պահին մենք Հայոց Ցեղասպանության զոհերին նվիրված ներկայացումն ենք պատրաստում, որի բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանն է: Թատրոնի ռեժիսորներից Լեւոն Ուզունյանն աշխատում է այսօր վրաց ժամանակակից դրամատուրգ Նինո Միրզաշվիլու «Պարիր տանգո» պիեսի բեմադրության վրա, իսկ Ռոման Մաթիաշվիլին ներկայացնելու է երեւանցի, ծնունդով թբիլիսցի ժամանակակից դրամատուրգ Գուրգեն Խանջյանի «Անմեղսունակների պարը» ներկայացումը: Մոտ ժամանակներում Թբիլիսիի ռուսական Ալ.Գրիբոյեդովի անվան պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ավթո Վարսիմաշվիլին մեր դերասանների ընդգրկմամբ ներկայացնելու է իր հեղինակած «Սիրում եմ, սիրում եմ, սիրում եմ...» պիեսի բեմականացումը: Նաեւ մեր շատ սիրելի ռեժիսոր ու բարեկամ, Վանաձորի Հ.Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Վահե Շահվերդյանը առաջիկայում բեմադրելու է Շիրվանզադեի «Չար ոգին»: Բացի այդ, մենք մասնակիցն ենք Վրաստանի մշակույթի նախարարության «Դպրոցականների էքսկուրսիա թատրոններ» ծրագրի, որի շրջանակներում նախատեսում ենք հանդես գալ Վրաստանի շրջանների հանդիսատեսի առջեւ:

- Մենք միայն ուրախանալ կարող ենք ու հաջողություններ մաղթել մեր սիրելի թատրոնին: Ու քանի որ Մարտի 8-ն է, շնորհավորում ենք թատրոնի բոլոր կանանց՝՝ միջազգային տոնի առթիվ: Ի դեպ, հետաքրքիր է իմանալ, քանի՞ կին է աշխատում թատրոնում:

- Շնորհակալություն շնորհավորանքի համար: Մենք էլ մեր կողմից շնորհավորում ենք բոլոր կանանց՝ տոնի առթիվ: Իսկ ինչ վերաբերում է թատրոնին, ապա 107 աշխատողներից 59-ը կին ենք: Դե, եթե հարցնում եք, ասեմ, սովորաբար թատրոնում բոլորս միասին երեք առիթ ենք նշում. թատրոնի հոբելյանը, Արմեն Բայանդուրյանի ծնունդը եւ Մարտի 8-ը: Ուստի, օգտվելով ընձեռված հնարավորությունից, թույլ տվեք շնորհավորել բոլոր կանանց, միշտ բնական լինենք, զուսպ, քնքույշ ու բարի...

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԵՐԲ ԲԱ'ԽՏՆ Է ՔԵԶ ԳՏՆՈՒՄ...

Դժվար է ասել՝ լա՞վ է դա, թե՞ վատ, բայց կա մի օրինաչափություն. յուրաքանչյուր դար հաստատվում է՝ կենսահայացքի ու բարքերի նոր ըմբռնումներով: Իրենն է մեզ թելադրում նաեւ այսօրը: Արժեքների վերաիմաստավորման իր համակարգում՝ երրորդ հազարամյակը պահանջում է նախ՝ ուսում-մասնագիտացում-աշխատանքային կարգավիճակ, ապա՝ ընտանիքի ստեղծում: Այդ պահանջը դրվում է նաեւ կանանց...

Իսկ մենք, անսպասելի, մեր փնտրումներում, հանդիպեցինք Քրիստինե Անանյանին, ով չէր «ենթարկվել» հազարամյակի պահանջին...

Բոլոր դպրոցական շրջանավարտների նման՝ 17 տարեկան պարմանուհին պատրաստվում էր դառնալ ուսանող, բայց, իրեն իսկ համար անսպասելի՝ ընդունեց Միխայիլի ամուսնության առաջարկությունը: Նրանք, այդ ժամանակ, սոսկ ընդհանուր ծանոթներ էին: Շուտով տեղի ունեցան ամուսնական գեղեցիկ ու ավանդական իրադարձությունները՝ նշանդրեք, հարսանիք...

Թբիլիսիի Իլիայի անվան պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի բաժին՝ Քրիստինեն ընդունվեց ամուսնությունից հետո միայն եւ այժմ՝ երրորդ կուրսի ուսանող է, իսկ Միխայիլը վարում է սեփական խանութը:

Երիտասարդ զույգի հարսանիքից մեկ տարի անց՝ ծնվեց սպասված առաջնեկը՝ էլիզաբեթը: Փոքրիկն այժմ մեկ տարեկան է, եւ ծնողներն անհամբեր սպասում ու պատրաստվում են իրենց երկրորդ՝ բժիշկների հավաստիացումով՝ արու զավակի ծնունդին, մանչուկն ուր որ է աշխարհ կգա...

- Երբեք չէի հավատա, որ կարող էի ամուսնանալ առանց սիրո, սիրահարության, ռոմանտիկայի եւ՝ լինել այսքան երջանիկ,- խոստովանում է Քրիստինեն: - Իհարկե, կյանքի դեղատոմսեր չեն տրվում, բայց, թող աղջիկները նկատի ունենան ու ձեռքից բաց չթողնեն նախախնամության անակնկալները: Եթե հանդիպել ես քո կեսին, սերը հետո էլ կգա...

- Իսկ ինչպե՞ս գիտակցեցիր կամ զգացիր, որ հանդիպել ես՝ քեզ համար կանխորոշված քո կեսին:

- Ես, պարզապես, վստահեցի ներքին ձայնիս, որը զարմանալի հստակ ասում էր՝ «Սա քո բախտն է...»: Իմ փորձով համոզվեցի՝ չնախատեսված, պատահական ամուսնությունն էլ, կարող է անսխալ լինել...

- Գիտես, Քրիստինե, քո դեպքը հիշեցրեց Բանաստեղծի տողերը՝

«Եվ թեպետ բախտ ենք, բախտ ենք մենք փնտրում, Բայց բա'խտը, բա'խտը, բա'խտն է մեզ գտնում...»:

- Երեւի թե, այո, դա այդպես է...

- Հիմա դու, քսան տարեկանում, ե'ւ ուսանող ես, ե'ւ ամուսին, ե'ւ մայր, դա նշանակում է՝ համալսարանական լարված առօրյա, անհամար պարտականություններ, անքուն գիշերներ, նաեւ՝ սկեսուր, սկեսրայր, ավանդական ընտանիք... Չե՞ս զղջում՝ այդքան երիտասարդ տարիքում, ընտանեկան նման լուծ կրելուդ համար...

- (Մեղավոր ժտում է) անկեղծ ասած, ունեցել եմ զղջման պահեր, բայց հետո էլ՝ զղջացել ու շատ մեղավոր եմ ինձ զգացել ա'յդ զղջման համար... Դժվարանում եմ նույնիսկ մտովի պատկերացնել կյանքս՝ առանց մայրության, ընտանեկան, ամուսնական հոգսերի, իմ երջանկությունը հենց դա է ու՝ շնորհակալ եմ Աստծոն...

- Հավատո՞ւմ եք Աստծո գոյությանը:

- Ինչպես չհավատամ, երբ ինչ խնդրել եմ՝ կատարել է: Հավատս անսասան է: Իմիջայլոց, նույնիսկ չեմ կարող հիշել՝ ե՞րբ եւ ինչպե՞ս եղավ, որ «Հայր մերը» նախ՝ սովորեցի վրացերեն, հետո՝ հայերեն...

- Դու եւ ամուսինդ ինչպե՞ս եք պատկերացնում ձեր փոքրիկների ապագան:

- Նախ ասեմ՝ երազում ենք երրորդ զավակն ունենալ, մեր փոքրիկներին ուզում ենք կնքել էջմիածին քաղաքում: Բոլոր ծնողների նման՝ նրանց տեսնում ենք՝ առողջ, գեղեցիկ, բարձրագույն կրթությամբ, հաջողակ ու, մարդկայնորեն, ճշմարիտ քրիստոնյաներ...

- Դու ունես ռուսական կրթություն, ամուսինդ՝ հայկական, ո՞րն եք ընտրելու զավակների համար:

- Մեր ընտանիքում խոսում ենք հայերեն, շնորհակալ եմ սկեսուրիս, ով, բացի ընտանիքում ինձ սատար լինելուց, նաեւ հայերեն է ինձ սովորեցնում: Կարծում եմ՝ մեր զավակները կավարտեն հայկական դպրոց, բայց անպայման կտիրապետեն վրացերեն լեզվին, առանց որի՝ նրանք մեր երկրում կարող է եւ կարիերայում չհասնեն մեծ հաջողության, լավ կգիտենան նաեւ ռուսերենը, անգլերենը...

- Ի՞նչ կմաղթեք կանանց՝ Մարտի ութի առթիվ:

- Թող բոլոր աղջիկները, բոլոր կանայք իրենց կողքին ունենան հուսալի, ազնիվ ամուսիններ՝ ինչպես, ի դեպ, իմ ամուսինն է, իսկ մայրիկներին ու տատիկներին՝ առողջություն, թող միշտ ուրախանան իրենց զավակների երջանկությամբ եւ՝ նոր զավակների ու թոռների ծնունդներով...

- Մեր եւ թերթի ընթերցողների անունից՝ մենք եւս շնորհավորում ենք քեզ եւ բոլոր կանանց գարնան այս գեղեցիկ տոնի առթիվ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

Ø²ðÎÆ 8-À³ Î²Ü²Üò ØÆæ²¼¶²ÚÆÜ úð

ԵՐԲ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀՌՉԱԿՎԵՑ ՏՈՆԸ



Լսել եմ, որ Մարտի 8-ը՝ Կանանց միջազգային տոնը համարվում է կոմունիստական գաղափարախոսության ծնունդ: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ ենք այն հռչակել որպես պետական տոն:

Ա.Գեւորգյան

Մառնեուլի

Ընդհանրապես, Կանանց միջազգային օրվան առնչվող առաջին պատմական իրադարձությունը տեղի է ունեցել 1857թ. մարտի 8-ին, երբ Նյու-Յորքի տեքստիլ գործարանների կին աշխատողներն իրենց իրավունքների պաշտպանության համար քայլերթով անցան քաղաքի փողոցներով: Պատճառը ցածր աշխատավարձն ու աշխատանքի անբավարար պայմաններն էին: Մասնավորապես, բողոքում էին 16-ժամյա աշխատանքի դեմ:

Կես դար անց՝ 1908թ. նույն օրը, Նյու-Յորքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ակտիվիստները կանանց իրավունքների պաշտպանության համար ցույց կազմակերպեցին: 1909թ. Ամերիկայի սոցիալիստական կուսակցությունը փետրվարի վերջին կիրակին Կանանց ազգային օր հռչակեց: Իսկ ինչ վերաբերում է Կանանց միջազգային տոնի հռչակմանը, ապա դա տեղի ունեցավ 1910 թվականին Կոպենհագենում, երբ Կլարա Ցետկինի առաջարկությամբ, ի նշանավորումն Նյու Յորքում տեղի ունեցած իրադարձության, Կանանց միջազգային խորհուրդը Մարտի 8-ը հռչակեց որպես Կանանց միջազգային տոն:

1977թ. Միավորված ազգերի կազմակերպությունը Մարտի 8-ը հռչակեց Կանանց միջազգային տոն:

¼²ðØ²Ü²ÈÆ ö²êî

ԿԱՆԱՆՑ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՎՈՒՄ Է ԸՆԴԱՄԵՆԸ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ

Հետաքրքիր է, երբեւէ գիտական ուսումնասիրություններ անկկայվե՞լ են, արդյոք, կանանց երջանկության հասակի սահմանման նպատակով: Եթե՝ այո, ապա կցանկանայի իմանալ, ի՞նչ արդյունքներ են ստացվել:

Վ.Սարգսյան

Թբիլիսի

Եթե հավատանք ժողովրդական ասույթին, սերը, այսինքն երջանկությունը խորթ չէ ոչ մի տարիքի համար: Թեպետ տարբեր փորձերից հետո գիտնականները այն եզրակացությանն են եկել, որ կանացի երջանկության գագաթնակետը 28 տարեկանն է:

Այդ տարիքում կանայք զգում են մեծ էներգիա, իրենց համարում են հաջողակ, ինքնավստահ եւ սեքսից մեծ հաճույք են ստանում:

Մասնագետները պնդում են, որ պատահական չէ, որ 28 տարեկանում կանանց մազերի կազմվածքը ամենալավ վիճակում են, դա բերում է ինքնավստահության եւ որպես հետեւանք երջանկություն:

Ցավոք, այդ ժամանակահատվածը շատ կարճ է, արդեն 30 տարեկանում կանայք վախենում են ծերությունից, չնայած անձնական կյանքը ամենալավը դասավորվում է 30-ից հետո:

Ðº î²øðøÆð ¾

Ի՞ՆՉՆ Է ԿՆՈՋԸ ԴԱՐՁՆՈՒՄ ԳՐԱՎԻՉ

Ի՞նչն է կնոջը հմայիչ դարձնում, ինչպե՞ս պետք է գրավել տղամարդու սիրտը առաջին իսկ հայացքից: Գուցե օգնե՞ք բացահայտելու կանացի հմայքի գաղտնիքները:

Հ.Մուրադյան

Ախալքալաքի

Առաջինը, որ գրավում է տղամարդուն կնոջ մեջ դա կանացի հայացքն է, պարզվում է՝ հայացքով շատ բան կարելի է ասել ու անել: Այնպես որ, գերեք տղամարդկանց ոչ թե ներկած աչքերով ու թարթիչներով, այլ բնական, հմայիչ հայացքով եւ, ամենակարեւորը, մի թաքցրեք, որ նա գրավում է Ձեզ:

Ձայնը. Ըստ հոգեբանների կանացի ձայնը, մանավանդ ցածր ձայնը ուղղակի խենթացնում է տղամարդուն, որքան ցածր է ձայնի ռիթմը, այնքան կինը կրքոտ ու գրավիչ է դառնում:

Քայլվածքը նույնպես մեծ նշանակություն ունի, կարեւորը այն պետք է լինի թեթեւ՝ կոնքերի շարժումով:

Փոքր-ինչ բաց հագուստը կարող է դառնալ կանացի հմայքներից ամենագլխավորը թերեւս, բայց հիշեք, շատ բաց հագուստը միայն առաջին հայացքից կհրապուրի տղամարդուն: Ավելի լավ է ընտրեք զգեստ՝ ճեղքերով եւ համարձակ կտրվածքներով:

Ժպիտը. Տղամարդիկ ուղղակի պաշտում են ժպտացող, հումորի զգացումով կանանց: Այն կինը, որ շարունակ մռայլ տեսք ունի, երբեք չի կարող գրավել տղամարդկանց: Հակառակ սերը առհասարակ ատում է դժկամներին, ուրախ, ծիծաղկոտ, անհոգ կանայք նրանց պարզապես ձգում են:

Շպարը եւ հոտը նույնպես կարեւոր ատրիբուտներ են տղամարդուն հմայելու համար: Կարեւորը ամեն ինչ բնական մատուցելու մեջ է: Բնավ պետք չէ չափազանց արտահայտիչ շպարվել: Պետք է հիշել, որ տղամարդիկ չեն սիրում շատ ներկված կանանց, կարեւորը արտաքին թերությունները շպարի միջոցով ծածկելն է, խնամված տեսքով հանդես գալը: Ինչ վերաբերում է հոտին, ապա այն ավելի շատ պետք է լինի ոչ թե օծանելիքի, այլ բնական կնոջ հոտը, ինչն էլ հենց գրավում ու խենթացնում է տղամարդուն:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՄԱՐՏԻ 8-Ը՝ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Արդեն մեկ դարից ավելի է, ինչ Մարտի 8-ը նշվում է որպես Կանանց միջազգային օր, ու շատ աղջիկներ եւ կանայք այս օրվան են սպասում, որ իրենց համար պատրաստված անակնկալը լինի տարբերվող ու դուրեկան: Իսկ շատ տղամարդիկ այդ օրը իրենց այնքան էլ հարմարավետ չեն զգում. ի վերջո ուրախացնել իրենց քույրերին, մայրերին եւ ընկերուհիներին, այսինքն՝ կին արարածին, շատ դժվար է: Թե ինչպես են նշում մարտի 8-ը տարբեր երկրներում, ներկայացնում ենք ստորեւ:

Կանանց օրվա կապակցությամբ տղամարդիկ «տառապել» են դեռ Հին Հռոմում: Այդ դարաշրջանում եղել է մի օր, որը կանանց տոնն է համարվել, որը սակայն նշում էին տան տնտեսուհիները: Այդ օրը Հռոմում ամուսնացած կանայք սիրով ու ջերմությամբ էին շրջապատվում, իրենց ամուսիններից նվերներ ստանում: Հարգարժան տիկիններն այդ օրը հագնում էին իրենց ամենաթանկարժեք զգեստները, բուրավետ ծաղկեպսակներ դնում իրենց վարսերին եւ գնում տաճար աղոթելու: Այդ օրը նույնիսկ ստրկուհիներն են նվերներ ստանում, եւ սա միակ օրն է եղել, որ հնարավորություն են ստացել հանգստանալու:

Իսկ ինչ վերաբերում է մարտի 8-ը որպես կանանց միջազգային տոն հռչակելուն, ապա 1857թ. մարտի 8-ին Նյու-Յորքում տեղի ունեցած իրադարձությունից հետո, 1910 թվականին Կոպենհագենում կանանց միջազգային համաժողովի կողմից ընդունված որոշումը, արդեն հաջորդ տարում, 1911 թվականին որպես միջազգային տոն նշվեց Գերմանիայում, Ավստրիայում, Դանիայում եւ Շվեյցարիայում:

Ռուսաստանում մարտի 8-ը նշել են 1913թ.-ին, եւ մինչ օրս մեծ շուքով, ամեն տարի բարձր տրամադրությամբ են դիմավորում այդ օրը: Այստեղ մարտի 8-ին տղամարդիկ նվիրում են հիմնականում գեղեցիկ ծաղկեփնջեր եւ օծանելիքներ:

Ի տարբերություն մնացած երկրների, մարտի 8-ը Իտալիայում ոչ աշխատանքային օր չի համարվում: Այդ օրը Իտալիայում տղամարդիկ եւ կանայք միասին չեն նշում. կանայք աշխատանքից հետո գնում են ինչ-որ ռեստորան, իսկ երեկոյան, միայն հատուկ այդ օրը աշխատում են տղամարդկանց ստրիպ-բարեր, որտեղ կանանց մուտքը անվճար է:

Ֆրանսիայում մարտի 8-ին կազմակերպվում են կոնֆերանսներ, ցույցեր, երթեր՝ կապված կանանց իրավունքների պաշտպանության հետ:

Գերմանիայում այդ օրը կանանց իրավունքների իրավապաշտպանները, Արհմիությունները կազմակերպում են տարբեր միջոցառումներ:

Չինաստանում չինացիները փորձում են ապացուցել, որ կանանց սրտի միակ ճանապարհը ստամոքսի միջոցով է: Այդ օրը այստեղ կանանց հանդեպ իրենց սերը ապացուցելու եւ ցույց տալու համար, յուրաքանչյուր տղամարդ պետք է դրսեւորի իրեն իսկական խոհարարի պես: Մարտի 8-ը Չինաստանում բոլոր կանանց համար ոչ աշխատանքային օր է: Այդ օրը կանայք մասնակցում են «Միսս Պեկին» մրցույթին եւ բոլորին փորձում ապացուցել, որ իրենք աշխարհի ամենագեղեցիկ կանայք են:

Վրաստանում, երկրի անկախության վերականգնումից հետո, 1991 թվականին այն ժամանակվա իշխանությունները փորձեցին կանանց միջազգային տոնը «մաքրազարդել» գաղափարախոսությունից եւ մարտի 8-ը հանեցին երկրի պետական տոնացույցից: Փոխարենը՝ մարտի 3-ը հռչակեցին մայրության օր, թեպետ մարտի 8-ը մարդկանց գիտակցությունից վերացնել չստացվեց: Արդյունքում, մարտի 3-ին զուգընթաց, վերականգնվեց նաեւ մարտի 8-ը՝ կանանց միջազգային օրը: Այսպիսով, մարտին ստացվեց կանանց նվիրված երկու տոն, ընդ որում՝ երկուսն էլ ընդունվեցին պետականորեն, հայտարարվեցին ոչ աշխատանքային օրեր:

Հայաստանում մարտի 8-ը համարվում է կանանց, գեղեցկության եւ մայրության միջազգային օր, սակայն տոն է ոչ միայն այս օրը, այլեւ, ի ուրախություն հայ կանանց՝ մարտի 8-ից սկսած մինչ ապրիլի 7-ը համարվում է կանանց միամսյակ: Այդ օրը հայ տղամարդիկ իրենց կանանց, մայրերին, քույրերին նվիրում են տարբեր նվերներ, ծաղիկներ, օծանելիքներ, փափուկ խաղալիքներ, հուշանվերներ եւ այլն: Մարտի 8-ը Հայաստանում նույնպես համարվում է ոչ աշխատանքային օր:

ԱՍՈՒՅԹՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Մաթեմատիկական տրամաբանությունն ուսումնասիրում են մեկ տարի, իսկ կանացի տրամաբանությունը ամբողջ կյանքի ընթացքում:

ԻԼԻԱ ՎԵԿՈՒԱ

Շատ բան կարելի է սովորել անփորձ աղջիկներից:

ՋԱԿՈՄՈ ԿԱՋԱՆՈՎ

Կնոջ համար գեղեցկությունն ավելի կարեւոր է, քան միտքը, քանի որ տղամարդուն ավելի հեշտ է նայել, քան մտածել:

ՄԱՐԼԵՆ ԴԻՏՐԻԽ

Ամուսնացիր ամեն դեպքում: Եթե լավ կին պատահի, բացառություն կլինես: Իսկ եթե վատը՝ կդառնաս փիլիսոփա:

ՍՈԿՐԱՏԵՍ

Եթե աշխարհում չլինեին կանայք, աշխարհի բոլոր փողերն իմաստ չէին ունենա:

ԱՐԻՍՏՈՏԵԼ

Կանայք միշտ ոգեշնչում են տղամարդկանց մեծ գործերի, սակայն միշտ խանգարում են դրանք ի կատար ածել:

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ

Կնոջ հետ անցկացրած ժամանակը չի կարելի կորած համարել:

ԱՆԴՐԵ ՄՈՐՈՒԱ

Տղամարդիկ միշտ ճիշտ են, իսկ կանայք երբեք չեն սխալվում:

Ա.ԱՎԱԳՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸àîÜ°ð Ø²ðîÆ 8-Æ ²èÂÆÌ

** Մարտի 8-ի առավոտյան արթնանալով, կինը երազկոտ ձգվելով ասում է ամուսնուն.*

- Գիտե՞ս ինչ հրաշալի երազ եմ տեսել: Իբր Մարտի 8-ի առթիվ դու ինձ նվիրում ես ադամանդե մատանի: Տեսնես ի՞նչ է նշանակում այս երազը:

- Երեկոյան կիմանաս,- խորհրդավոր ժպտալով ասում է ամուսինը:

Կինը երեկոյան զարդարում է տոնական սեղանը, վառում ռոմանտիկ մոմերը...

Ամուսինը գալիս է տուն եւ նույն խորհրդավոր ժպիտով նրան մեկնում կարմիր ժապավենով մի գեղեցիկ տուփ: Կինն անհամբեր բացում է տուփը, իսկ այնտեղ ընդամենը գիրք է՝ «Երազահան»:

** - Սիրելի՛ս, դու չքնաղ ես, ինչպես այս ծաղիկները:*

- Իսկ ես մտածում էի, որ չքնաղ եմ, ինչպես ոսկե ապարանջանը...

- Չէ, սիրելիս: Դու չքնաղ ես այս ծաղիկների պես...

** - Հայրիկ, իսկ ինչո՞ւ է Մարտի 8-ը օրացույցում կարմիր գույնով ներկված:*

- Տղա՛ս, դա մեր՝ տղամարդկանց արյան գույնն է:

** - Սիրելի՛ս, ես երազում եմ, որ դու այնպիսի արտասովոր նվեր մատուցես ինձ, որ ուրախությունից հազիվ կարողանամ ասել. «Վաո՜ւ, Լեքսուս»:*

** Տղամարդը մտնում է խանութ՝ Մարտի 8-ի առթիվ նվեր գնելու համար: Վաճառողուհուն խնդրում է օգնել ընտրության հարցում:*

- Կնոջ համա՞ր, թե՞ ավելի թանկ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի Ազգային ժողովում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ խորհրդակցություն, որը վարել է Հայաստանի Աժ նախագահ Գալուստ Սահակյանը:

Խորհրդակցությանը մասնակցել են Հայաստանի Աժ պատգամավորներ, Աժ աշխատակազմի ներկայացուցիչներ: Ձեկույցով հանդես է եկել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների գլխավոր համակարգող, Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը: Նա խորհրդակցության մասնակիցներին ներկայացրել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նպատակները, խնդիրներն ու առաջիկա անելիքները, Հայաստանում եւ արտերկրում անցկացվելիք միջոցառումների ժամանակացույցն ու ծրագիրը, դրանց իրականացման գործում խորհրդարանականների մասնակցությանը վերաբերող հարցեր:

ՍԿՍՎՈՒՄ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ

Հայաստանը 2015 թվականին չի ավարտում ցեղասպանությունների միջազգային ճանաչման եւ դատապարտման համար պայքարը: 2015թ. ապրիլի 24-ից սկսվում է ցեղասպանության դատապարտման նոր փուլ:

Այս մասին հայտարարեց Հայաստանի Աժ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը: «Մենք այստեղ պետք է հետեւողական աշխատանք կատարենք: Եվ մեր սփյուռքահայ օջախները, եւ մեր պետական կառույցները, եւ մեր կուսակցական գործընկերները պետք է միասնական աշխատանք կատարեն այս ուղղությամբ»,- նշեց Էդուարդ Շարմազանովը:

Նա ընդգծեց, որ դա երկարատեւ պայքար է, որի հիմնական ուղղությունը հստակ մատնանշված է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում: Շարմազանովի խոսքերով, Հայաստանի իշխանություններն ակտիվորեն աշխատում են Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտմանը հասնելու ուղղությամբ՝ հիշեցնելով, որ ակնկալիքներ կան, որ այս տարի եվրոպական մի երկիր կընդունի Հայոց ցեղասպանության ժխտումը դատապարտող օրենք: «Սակայն, շատ դեպքերում, քանի որ մեր կողմից տարվող աշխատանքները շատ կարեւոր են, պետք չէ հրապարակել մեր կողմից արված քայլերը, քանի որ մեր դեմ գործում է 80 միլիոնանոց Թուրքիան: Եվ մենք կարեւորում ենք ճիշտ, զուսպ եւ արդյունավետ աշխատանքը»,- եզրափակեց Աժ փոխնախագահը:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վազգեն Սարգսյանի ծննդյան 56-ամյակի եւ «Պատանի երկրապահ» ակումբի սաների երդման արարողության միջոցառումների շարքը, մարտի 5-ին, սկսվել է եռաբլուր պանթեոնում, ուր Սպարապետին հարգանքի տուրք մատուցելու էին եկել բարձրաստիճան սպայակազմը՝ Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորությամբ:

Միջոցառման մասնակիցները ծաղիկներ ու ծաղկեպսակներ դրեցին անհայտ կորածների հուշահամալիրին: Այնուհետեւ, ներկաները Սեյրան Օհանյանի եւ Արմեն Սարգսյանի գլխավորությամբ ծաղիկներ դրեցին եւ խոնարհվեցին Վազգեն Սարգսյանի շիրմաքարին:

Մարզահամերգային համալիրի հրապարակում տեղի ունեցավ «Պատանի երկրապահ» կամավորականների երդման հանդիսավոր արարողություն, որին ներկա էին Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, ԵԿՄ վարչության նախագահ Մանվել Գրիգորյանը, մի շարք բարձրաստիճան զինվորականներ, քաղաքացիական ծառայողներ, Արցախյան ազատամարտի վետերաններ: Միջոցառման ավարտին պատանի երկրապահները ներկայացել են ցուցադրական ելույթներով, որին հաջորդել է հանդիսավոր քայլերթը:

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ ԿԲԱՎԱՐԱՐՎԻ

Հայաստանի սփյուռքի նախարարության 2015 թվականի «Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության եւ օժանդակ նյութերի մշակում եւ տրամադրում» ծրագրով կբավարարվի Սփյուռքում գործող շուրջ 350 ամենօրյա եւ 600 մեկօրյա դպրոցների ուսումնական գրականության պահանջարկը: Վերոնշյալ նախագիծն ընդգրկված է Հայաստանի կառավարության մարտի 5-ի նիստի օրակարգում:

Տրամադրվող գրականությունը մշակվում է համապատասխան երկրների, համայնքների, կրթօջախների առանձնահատկությունների, կրթական կարիքների բազմազանության, արեւմտահայերեն խոսող սփյուռքահայ հատվածի պահանջների:

«Հատուկ ուշադրության կենտրոնում են հատկապես արեւմտահայերենով դասագրքերի, ուսումնաօժանդակ նյութերի մշակման խնդիրները, գնալով ավելանում է սփյուռքին անհրաժեշտ մանկական գրականության, ազգային երգի ու պարի ձեռնարկների, ժամանակակից մեթոդական ու դիդակտիկ նյութերի, բառարանների, ինքնուսույցների, զրուցարանների պահանջարկը:

Վերջին տարիներին գնալով ավելանում է գրականության ձեռքբերման խնդրով դիմող Սփյուռքի կրթական հաստատությունների, գրադարանների, ուսումնական, մշակութային, համայնքային կազմակերպությունների, այլ հաստատությունների թիվը, աճում է հայտերի ու պահանջվող նյութերի թիվը, որը պայմանավորված է կրթական գործի կազմակերպման որակական փոփոխություններով, ինչպես նաեւ մեկօրյա դպրոցների ստեղծմամբ»,- նշված է նախագծի հիմնավորման մեջ:

646 ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ԿՓՈԽՀԱՏՈՒՑՎԻ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի մասնակցությամբ, Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի նիստերի դահլիճում ամփոփվեցին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած կրթաթոշակի մրցույթի արդյունքները: Այս տարի ուսման վարձի փոխհատուցում է ստացել 646 ուսանող: Որոշ ուսանողների կրթաթոշակի հավաստագիրը հանձնել է անձամբ վարչապետը:

Կրթաթոշակի մրցույթը հայտարարվել է պետական բուհերի առկա ուսուցման բակալավրիատում սովորող առաջին կուրսի անվճար համակարգում չընդգրկված ուսանողների համար: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի կառավարության աջակցությամբ. այս տարի մրցույթի անցկացման համար Հայաստանի կառավարությունը ՀԵՀ-ին հատկացրել է 64 մլն դրամ: Հայաստանի գրեթե բոլոր, այդ թվում՝ մարզերում գործող պետական բուհերից այս տարի մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել մոտ 1040 ուսանող, ընդ որում, 179-ը՝ մարզերում գործող բուհերից: Ուսանողների ընտրությունը կատարելիս հաշվի են առնվել մրցույթի կարգով սահմանված հստակ չափորոշիչները՝ առաջադիմությունը, սոցիալապես անապահով լինելու հանգամանքը եւ այլն: Մրցույթում հաղթած ուսանողների անունները հրապարակվում են ՀԵՀ-ի պաշտոնական՝ heh.am կայքում:

Ընդհանուր առմամբ, պետական բյուջեից 2011-2014թթ. Հայաստանի երիտասարդական հիմնադրամը փոխհատուցել է պետական բուհերի անվճար համակարգում չընդգրկված ավելի քան 3000 ուսանողի ուսման վարձ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ. ԾՐԱԳԻՐԸ ԿՄՇԱԿՎԻ

Երեւանում մարտի 5-ին կայացավ Հայաստան-Եվրոպայի խորհուրդ Գործողությունների ծրագրի Ղեկավար կոմիտեի հանդիպումը:

Հանդիպմանն ամփոփվել են մարդու իրավունքների, իրավունքի գերակայության եւ ժողովրդավարության ոլորտներում Հայաստան-Եվրոպայի Խորհուրդ 2012-2014թթ. Գործողությունների ծրագրի կատարման արդյունքները: Հաշվի առնելով ընթացիկ Գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացումը՝ հայկական կողմի մասնակիցները վերահաստատել են նոր՝ 2015-2017թթ. Գործողությունների ծրագիր մշակելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության առաջնայնությունների եւ բարեփոխումների օրակարգը: Այդ առթիվ Եվրոպայի խորհրդի գործընկերներին են ներկայացվել ապագա Գործողությունների ծրագրի գերակա ուղղություններն ու ակնկալվող արդյունքները:

ԳԱԳԻԿ ՇԱՌՈՒԿՅԱՆԸ ՀՐԱԺԱՐՎԵՑ ԲՀԿ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Գագիկ Շառուկյանը հրաժարվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահի եւ խմբակցության ղեկավարի լիազորություններից: Նա իր գործը շարունակելու համար առաջադրել է Նաիրա Զոհրաբյանի թեկնածությունը: Այս մասին Շառուկյանը հայտարարել է կուսակցության արտահերթ համագումարում, որն անցկացվում է դռնփակ, սակայն լրատվական ծառայությունը տարածել է նրա ելույթը:

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԸ ԹՈՂԵՑ «ԲԱՐԳԱՎԱՃԻ» ՇԱՐՔԵՐԸ

Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Օսկանյանը «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից դուրս գալու մասին դիմում է ներկայացրել: Այս մասին տեղեկացրեց Ազգային ժողովի ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Զոհրաբյանը: «Վարդան Օսկանյանը կուսակցությունից դուրս գալու մասին դիմում է ներկայացրել, իսկ պատգամավորի մանդատը վայր դնելու մասին դիմում նա չի ներկայացրել»,- նշեց Զոհրաբյանը:

Նշենք, որ մարտի 4-ին Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում Աժ ԲՀԿ խմբակցության պատգամավոր Միքայել Մելքումյանը, անդրադառնալով Վարդան Օսկանյանի՝ ԲՀԿ-ն լքելու մասին լուրերին, հայտնել էր, որ նա պատգամավորական մանդատը վայր դնելու մասին դիմում է ներկայացրել, սակայն կուսակցությունը լքելու մասին չի հայտարարել:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Գանձասարի վանական համալիրի հարեւանությամբ կառուցված ճեմարանը շուտով կդառնա Արցախի ամենակարեւոր գիտական եւ մշակութային կենտրոններից մեկը: Հենց այդ վայրում այժմ ընթանում են վերակառուցման աշխատանքներ, որպեսզի ճեմարանը վերածվի Մատենադարանի: Կառույցի շինարարական աշխատանքները, ամենայն հավանականությամբ, կավարտվեն մայիսի վերջին եւ հունիսին կկայանա «Գանձասար» գիտամշակութային կենտրոնի բացումը: Արցախի Մատենադարանը համագործակցելու է Մեսրոպ Մաշտոց չեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հետ եւ համարվելու նրա ստորաբաժին: Արցախի Մատենադարանի շինարարական աշխատանքը ղեկավարում է ԼՂՀ քաղաքաշինության նախարարությունը եւ ճարտարապետն այն նույն անձնավորությունն է, ով ժամանակին նախագծել է ճեմարանի շենքը:

ԴՈԼԱՐԸ ԿՐԿԻՆ ԹԱՆԿԱՑԵԼ Է

Հայաստանի Կենտրոնական բանկի հրապարակած փոխարժեքների համաձայն՝ մարտի 5-ին ԱՄՆ դոլարի փոխարժեքն աճել է 0.49 դրամով՝ կազմելով 479.54 դրամ: Եվրոյի փոխարժեքը նվազել է 3.96 դրամով եւ կազմել 529.22 դրամ. ՌԴ ռուբլու փոխարժեքն աճել է 0.01 դրամով՝ կազմելով 7.77 դրամ: Բրիտանական ֆունտի փոխարժեքը նվազել է 3.66 դրամով եւ կազմել 730.87 դրամ:

Թանկարժեք մետաղների համար սահմանված գներով՝ ոսկու մեկ գրամի գինը մարտի 5-ին կազմել է 18 հազար 493.37 դրամ, արծաթի գինը՝ 251.61 դրամ, պլատինի գինը՝ 18 հազար 161.89 դրամ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՐՏ

08.03.2015. Տնտեսի կիրակի

Մեծ Պահքի չորրորդ կիրակին կոչվում է Տնտեսի, ըստ այդ օրվա խորհուրդը բացատրող անիրավ տնտեսի մասին առակի:

11.03.2015. Միջինք

Ըստ Մաղաքիա արք.Օրմանյանի՝ Միջինք անունը տրվում է Մեծ պասը կիսող օրվան, որը տոնական նշանակություն չունի: Միջինք է Դ (չորրորդ) չորեքշաբթի կամ Մեծ պասի 24-րդ օրը: Այդ օրը, ըստ ժողովրդական ավանդության՝ տանտիկինները թխում են բաղարջ, որի մեջ մետաղադրամ են դնում: Ում բաժին ընկնի այդ դրամը, այդ տարի հաջողություն կունենա:

14.03.2015. Սուրբ քառասուն մանկանց հիշատակության օր

ՄՐՑՈՒՅԹ

ՄԵԿՆԱՐԿԵԼ է Kolga Tbilisi Photo 2015 ՖՈՏՈՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Մեկնարկել է Kolga Tbilisi Photo 2015 ամենամյա միջազգային ֆոտոմրցույթի մասնակիցների գրանցումը:

Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է մարտի 20-ից ոչ ուշ առցանց դիմում լրացնեն կազմակերպիչների kolga.ge պաշտոնական կայքում: Առաջվա պես միջազգային ժյուրին հաղթողներին կհայտարարի հինգ անվանակարգերում՝ դոկումենտալիստիկա, ռեպորտաժ, կոնցեպտուալ ֆոտոնախագիծ, մեկ կադր, շարժական ֆոտո («Geocell»):

Ֆոտոմրցույթի մրցանակային հիմնադրամն այս տարի կազմում է ԱՄՆ-ի 6 հազար դոլար (12 հազար 840 լարի):

Առաջին չորս անվանակարգերի հաղթողները մրցանակ կստանան 1,5 հազար դոլարի (3210 լարի) չափով, իսկ շարժական հեռախոսով (Geocell-ի բաժանորդ) արված լավագույն ֆոտոյի հեղինակը նվեր կստանա iPhone 6:

Ցուցահանդեսի բացումը պլանավորված է մայիսի 1-ին: Անցյալ տարի մրցույթին մասնակցել է 38 երկիր, այս տարի կազմակերպիչներն ակնկալում են, որ հյուրերի թիվը կավելանա:

Բացի նախագծի մասնակիցների աշխատանքներից, ցանկացողները կկարողանան այցելել միջազգային հյուրերի կոլեկտիվ եւ անհատական ցուցահանդեսներ: Այս տարի նաեւ կկազմակերպվեն բազմաթիվ սեմինարներ, հանրային բանավեճեր եւ գործնական սեմինարներ:

Kolga Tbilisi Photo 2015 ֆոտոմրցույթը վերանվանվել է 2012 թվականին, ավելի վաղ այն կրում էր Kolga անվանումը:

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 100

ԿԱՅԱՅԱՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՆԻՍՏԸ



Մարտի 2-ին «Հայարտուն» կենտրոնում կայացավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող Վրաստանի հանձնախմբի հերթական նիստը՝ ընդլայնված կազմով:

Նիստի աշխատանքին մասնակցեց եւ ելույթ ունեցավ Վրաստանում Հայաստանի դեսպան Յուրի Վարդանյանը:

Նիստը, որը վարում էր հանձնախմբի նախագահ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, քննարկեց ապրիլյան միջոցառումները մայր հայրենիքում եւ Վրաստանում, Թբիլիսիում եւ հայաբնակ շրջաններում ապրիլի 23-ին եւ 24-ին ծրագրված միջոցառումները անհրաժեշտ պարագաներով ապահովելու հարցը:

Կազմակերպվող միջոցառումների շարքում դասվեցին Պ.Ադամյանի անվան հայկական թատրոնի բեմադրությամբ Հիշատակի երեկոն, տեղերում Հայոց ցեղասպանությանը նվիրված ֆիլմերի ցուցադրությունը, Մեծ Եղեռնի զոհ մտավորականների հիշատակին մոմավառությունը, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Վրաստան» թերթի հատուկ համարի հրատարակումը: Առաջարկվեց Թբիլիսիում հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում կազմակերպել 100 տնկիների ծառատունկ:

Առաջիկայում համացանցում կտեղադրվի Թբիլիսիում եւ շրջաններում իրականացվելիք միջոցառումների ճշգրտված ժամանակացույցը:

Վրաստանի հանձնախմբի հաջորդ նիստը կանցկացվի մարտի 23-ին Սամցխե-Ջավախեթիում:

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Կիպրոսի Այանապա քաղաքում մեկնարկեց ՈՒԵՖԱ-ի Զարգացման գավաթի խաղարկությունը: Մրցաշարի շրջանակներում՝ ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 15 տարեկանների հավաքականը հաղթեց Վրաստանի պատենական թիմին:

Հայաստանի հավաքականը վրաց իր հասակակիցների նկատմամբ առավելության հասավ նվազագույն հաշվով՝ 1:0:

ԵՐԵՎԱՆԻ «ՈՒԼԻՍՈՒՄ» ՎԵՑ ՎՐԱՑԻ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Հայաստանի ֆուտբոլի պրեմյեր լիգայի հերթական հանդիպմանը Երեւանի «Ուլիսը» 2:1 հաշվով պարտության մատնեց «Բանանցին»: Հատկանշական է, որ այդ խաղի համար «Ուլիսը» գրանցել էր վեց վրացի ֆուտբոլիստի: Մասնավորապես, թիմի մեկնարկային կազմում հանդես եկան Գիորգի Խուբուան, Իրակլի Գեպերիձեն, Գալակտիոն Զոիձեն, Իրակլի Չեժիան եւ Լեւան Ժգարկավան, իսկ Դավիթ Խուրցիձեն պահեստայինների աթոռին էր: «Ուլիսի» մեկնարկային կազմում էր նաեւ Նիկա Պիլիեւը, որն անցյալ խաղաշրջանում հանդես էր գալիս Գորիի «Դիլայում»:

Նշենք, որ Հայաստանի պրեմյեր լիգայի ոչ մի ակումբում, միաժամանակ այդ թվով վրացի ֆուտբոլիստներ երբեք չեն եղել:

ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ

ԹԲԻԼԻՍԻ-ՄՈՍԿՎԱ ՉՎԵՐԹՆԵՐ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՏԻ 28-Ը

Վրաստանի եւ ՌԴ-ի ավիաընկերությունները Թբիլիսի-Մոսկվա-Թբիլիսի երթուղով շաբաթական 18-ական չվերթ կկատարեն մինչեւ մարտի 28-ը: Ինչպես նշել է «Ռուսթավի-2» հեռուստաընկերությունը վրացական եւ ռուսական կողմերը ավիափոխադրումների շուրջ բանակցությունների ընթացքում որոշում են ընդունել պահպանել «18 առ 18» հաճախականությունը՝ մինչեւ վերջնական որոշման ընդունումը, որը վերստին հետաձգվել է:

Վրաստանի հայ ավետարանական եկեղեցին եւ «Վրաստան» թերթի խմբագրությունը վշտակցում են Եվրասիական Հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ, վերապատվելի, դոկտոր Ռենե Լեւոնյանին, նրա սիրելի մոր՝

Հռիփսիմե Պողոսի ԼԵՎՈՆՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին:

Թբիլիսիի հայկական դպրոցների մանկավարժները խորին ցավակցություն են հայտնում Թբիլիսիի նախկին թիվ 95 դպրոցի վաստակաշատ մանկավարժ Հասմիկ Պետրոսյանին, զավակներ՝ Սվետլանա, Յուրի եւ Էդվարդ Պետրոսյաններին, սիրելի ամուսնու եւ հոր՝

Սերգեյ Հմայակի ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ Բարձրյալ Տիրոջից հայցում հանգուցյալի հոգուն հավիտենական հանգստություն:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Բանաստեղծ ... Բարսեղյան: 9.«Լալկան» ծառ: 10.Տակն ու վրա եղած: 11.Քաղաք Ուկրաինայում: 13.XVIII դարի Արեւելյան Վրաստանի կաթողիկոս-պատրիարք ... առաջին: 16.Ֆուտբոլ, գնդակը դրսում: 17.Պատմական աշխարհագրական նահանգ ժամանակակից Թուրքիայում, պատմական Մեսխեթիի մաս ... Կլարջեթի: 19.Տխմար, անիմաստ: 22.Լավ, հոյակապ: 24.XX դարի ամենահայտնի եւ նշանավոր ամերիկացի երգիչներից էլվիս ...: 25.Քաղաք Սիրիայում: 27.Կահ-...: 29.Քիմիական տարր: 32.Պպզում, կկզում: 33.Պատմա-աշխարհագրական շրջան Բալկանների արեւելքում: 35.Հայաստանի ազգային հերոս ... Մանուկյան: 37.Երեւանցու դիմելաձեւ: 39.Հայտնի օպերային թատրոն Միլանում «Լա-...»: 40.Վերք (ժող.): 43.Վաշ-...: 44.Ռուսական էստրադային խումբ «Ռուկի ...»: 47.Պարարտ, չաղ: 49.Ֆրանսահայ նկարիչ, ֆիգուրատիվ արվեստի վարպետ Ժան ...: 50.Առանց եփելու: 53.Սեղանի խաղ: 54.Ընտանի անասուններ պահելու շենք: 55.Թերեւս: 57.Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ, Ջորջ ...: 58.Առանց աթոռի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ընդմիջում: 2.Խորհրդային բանաստեղծ, երգահան ... Օկուջավա: 3.Նյութափոխանակության խախտման հետեւանքով առաջացող մանկական հիվանդություն: 4.…-հռոմեական ըմբշամարտ: 5.Մետաղալարից հյուսված ցանցավոր զրահաշապիկ: 6.Պետության գլխավոր երգը: 8.Խցան: 12.Մուլտֆիլմ: 14.Երգչուհի ... Եսայան: 15.Արյունածուծ միջատ: 18.Վազքի տեսակ: 19.Հին ռուսական երկարության չափման միավոր: 20.Խորհրդային մաթեմատիկոս ... Կելդիշ: 21.Հանքային կամ օրգանական նյութերից առաջացած կպչուն նստվածք ջրերի հատակին կամ ճահիճներում: 23.Անշուշտ: 26.Հայկական ֆուտբոլային ակումբ: 28.Գետ հարավ-արեւմտյան Ֆինլանդիայում: 29.Փիլիսոփա հնագույն Չինաստանում ... Ցզի: 30.Մարմնի մաս: 31.Կեր, սնունդ: 34.Սարք, գործիք: 36.Կշիռ, ծանրություն: 38.Հին հայկական տոմարի IV ամիսը: 41.Ջրախողովակ, ջրանցույց: 42.Ամերիկյան թռչուն: 45.Ռուս քիմիկոս-օրգանիկ ... Վագներ: 46.Միմյանցից նեղացած: 48.Ֆրանսիացի գեղանկարիչ, քանդակագործ էդգար ...: 51.Ծանրության ռուսական չափ: 52.Արարատ, Ղազբեգի, էվերեստ ...: 56.Մեսրոպյան այբուբենի տառ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Բարաթ: 6.Ամուր: 9.Սասուն: 10.Ուղեկալ: 12.Դիոլ: 13.Պաշտպան: 17.Ազդակ: 20.Վեգա: 22.Ամարետո: 24.Ցածր: 26.Ալիսա: 28.Թալին: 30.Նա: 32.Թարս: 35.Կա: 36.Ադա: 37.Պարսիկ: 38.Վան: 39.Վանա: 40.Անհոգի: 42.Տոմս: 44.Ներ: 46.Որակ: 48.Նկար: 50.Մաքս: 52.Ուզեմ: 54.Ակտ: 56.Ամպ: 58.Ռե: 59.Ատլաս: 61.Եվա: 62.Ելցինա: 63.Պեր: 64.Պի: 65.Կորեա: 66.Մաթոս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ահեղ: 3.Ազապ: 4.Հաշտ: 5.Պումա: 7.Մահուդ: 8.Շուտով: 11.Լարած: 14.Պարեն: 15.Նատա: 16.Բացի: 18.Ջոլա: 19.Այս: 21.Եկա: 23.Մրուր: 25.Անթիվ: 27.Աջարիա: 28.Թեպետ: 29.Լարում: 31.Ակնարկ: 33.Ակամա: 34.Սվան: 41.Հատու: 43.Սոսկ: 45.Ենթասպա: 47.Կարլ: 49.Հեր: 50.Մանե: 51.Քաղցր: 53.Մետիս: 55.Տանկ: 57.Պերմ: 60.Տաո: 64.Պո:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445